

« Բանկային համակարգի 2011 թ-ի երրորդ եռամսյակի գործունեության ամփոփում

Բանկային համակարգի գործունեության ընթացիկ տարվա երեք եռամսյակների արդյունքները ցույց են տալիս, որ բանկային համակարգն ապրում է կայուն առաջընթաց: 2011 թ-ի երրորդ եռամսյակի ընթացքում համակարգը գործել է բնականոն հունով՝ ապահովելով գրեթե բոլոր հիմնական ցուցանիշների գծով համեմատական բարձր աճ: Բացառությամբ երկու բանկերի, համակարգի մնացած բանկերը հաշվետու եռամսյակը փակել են շահույթով, որը կազմել է 10.89 մլրդ դրամ, իսկ վնասը՝ մոտ 412.5 մլն դրամ: Եռամսյակի ընթացքում համակարգի ընդհանուր ակտիվների աճի հետ մեկտեղ ավելացել են վարկերի և արժեթղթերի ծավալները, անհամեմատ աճել են իրավաբանական և ֆիզիկական անձանցից ներգրավված թե ժամկետային և թե ցայսհանջ ավանդները, աճել եկամուտները և ծախսերը, ինչպես նաև մատուցվող ծառայությունների ծավալը:


Ընդհանուր ակտիվներ

Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները 2011 թ-ի երրորդ եռամսյակի ընթացքում աճել են 7.1 %-ով կամ 126.0 մլրդ դրամով և եռամսյակի վերջին կազմել 1,889.3 մլրդ դրամ, ընդ որում՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում ակտիվները աճել էին 6.0 %-ով կամ 81.7 մլրդ դրամով: Համեմատության համար նաև նշենք, որ ընթացիկ տարվա երկրորդ եռամսյակում ակտիվներն ավելացել էին մոտ 5.7 %-ով կամ 95.6 մլրդ դրամով: Տեղին է արձանագրել, որ այս տարվա ինն ամիսների ընթացքում ակտիվները ավելացել են 20.5 %-ով կամ 321.8 մլրդ դրամով՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի 7.9 %-ի կամ 106.2 մլրդ դրամի փոխարեն:

Վարկային ներդրումներ


Հաշվետու եռամսյակի ընթացքում վարկային ներդրումներն ավելացել են 5.3 %-ով կամ 62.2 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում աճել 5.6 %-ով կամ 6.5 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել համապատասխանաբար 1,241.3 և 121.8 մլրդ դրամ, ընդ որում՝ այս տարվա երկրորդ եռամսյակում վարկային ներդրումներն աճել էին 9.0 %-ով կամ 96.9 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում նվազել 7.5 %-ով կամ 9.4 մլրդ դրամով: Վերոնշյալին նաև ավելացնենք, որ նախորդ տարվա երրորդ եռամսյակում վարկային ներդրումներն աճել էին 7.6 %-ով կամ 6.4 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 18.6 %-ով կամ 16.2 մլրդ դրամով: 2011 թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ համակարգի վարկային ներդրումները կազմել են ընդհանուր ակտիվների 65.7 %-ը, ընդ որում՝ տնտեսությանը տրված վարկերի բաժնեմասը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 65.1 %-ը կամ 808.4 մլրդ դրամ, և այս ցուցանիշն 3-րդ եռամսյակի ընթացքում աճել է 7.3 %-ով կամ 55.1 մլրդ դրամով՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի 9.4 %-ի կամ 49.9 մլրդ դրամի դիմաց: Շարադրվածին միայն ավելացնենք, որ ընթացիկ տարվա 2-րդ եռամսյակում տնտեսությանը տրված վարկերն ավելացել էին 9.5 %-ով կամ 65.1 մլրդ դրամով:

2011 թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ
վարկերի կառուցվածքը՝ ըստ տնտեսության ճյուղերի (մլրդ դրամ)



Ֆիզիկական անձանց տրված վարկերը 2011 թ.-ի 3-րդ եռամսյակի ընթացքում աճել են 4.1 %-ով կամ 13.9 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 355.9 մլրդ դրամ, ընդ որում՝ այս տարվա երկրորդ եռամսյակի


ընթացքում ֆիզիկական անձանց տրված վարկերի աճը կազմել էր 7.5 % կամ 23.7 մլրդ դրամ: Համադրելու համար նշենք, որ անցած տարվա երրորդ եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց վարկերի ծավալը աճել էր 0.2 %-ով կամ 0.6 մլրդ դրամով: Հաշվետու եռամսյակի վերջում ֆիզիկական անձանց վարկերի ծավալը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 28.7 %-ը, որի կառուցվածքում սպառողական վարկերը կազմել են 18.2 %-ը կամ 226.3 մլրդ դրամ, իսկ հիփոթեքային վարկերը՝ 8.3 %-ը կամ 102.8 մլրդ դրամ: Հաշվետու եռամսյակի ընթացքում սպառողական վարկերի ծավալն աճել է 2.4 %-ով կամ 5.4 մլրդ դրամով, հիփոթեքային վարկերինը՝ 5.0 %-ով կամ մոտ 4.9 մլրդ դրամով, ընդ որում՝ ընթացիկ տարվա երկրորդ եռամսյակում նշված ցուցանիշների համապատասխան աճերը կազմել էին 3.7 % կամ 7.9 մլրդ դրամ և 4.1 % կամ 3.8 մլրդ դրամ: Հարկ է նշել, որ սպառողական և հիփոթեքային վարկերի գծով արձանագրված եռամսյակային աճերի դինամիկան հիմք է տալիս ակնկալելու, որ առաջիկայում ևս բանկային համակարգում կապահովվեն վերոնշյալ վարկատեսակների գծով համեմատաբար ավելի բարձր ցուցանիշներ:



Պարտավորություններ


2011 թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների ծավալը կազմել է մոտ 1,528.2 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամկետի համեմատ աճել է 34.7 %-ով կամ 393.5 մլրդ դրամով: Վերոնշյալ ցուցանիշը հաշվետու եռամսյակում աճել է 8.3 %-ով կամ 117.3 մլրդ դրամով, իսկ այս տարվա երկրորդ եռամսյակում՝ 6.9 %-ով կամ 91.6 մլրդ դրամով: Ընդհանուր պարտավորությունների կազմում ֆիզիկական անձանց համախառն ավանդները (ցպահանջ և ժամկետային) հաշվետու եռամսյակի ընթացքում աճել են 5.9 %-ով կամ 27.5 մլրդ դրամով, իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 15.5 %-ով կամ 60.2 մլրդ դրամով և եռամսյակի վերջում համապատասխանաբար կազմել 497.9 և 448.0 մլրդ դրամ, ընդ որում՝ ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների եռամսյակային աճը կազմել է 7.3 % կամ 26.0 մլրդ դրամ, իսկ իրավաբանական անձանց ժամկետային ավանդներինը՝ 5.3 % կամ մոտ 10.0 մլրդ դրամ: Տեղին է նշել, որ վերը նշված ցուցանիշների աճ էր գրանցվել նաև ընթացիկ տարվա երկրորդ եռամսյակի ընթացքում. այսպես, ֆիզիկական անձանց համախառն ավանդները (ցպահանջ և ժամկետային) աճել էին 7.9 %-ով կամ 34.4 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները 6.4 %-ով կամ 21.3 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 0.8 %-ով կամ 3.2 մլրդ դրամով, որում ժամկետային ավանդները աճել էին 8.9 %-ով կամ 15.3 մլրդ դրամով: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա երրորդ եռամսյակում ֆիզիկական անձանց համախառն ավանդները աճել էին 6.2 %-ով կամ 21.7 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 5.5 %-ով կամ 14.2 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները նվազել 1.0 %-ով կամ 3.5 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 7.7 %-ով կամ 13.0 մլրդ դրամով: Ասվածին միայն ավելացնենք, որ ներգրավված ավանդների (ֆիզիկական և իրավաբանական անձանց համախառն ավանդների) ծավալը հաշվետու եռամսյակի վերջում կազմել է ընդհանուր պարտավորությունների 61.9 %-ը:

Համակարգի ցպահանջ և ժամկետային ավանդների կառուցվածքը
2011 թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ (մլրդ դրամ)




■ Իրավաբանական անձանց ցպահանջ ավանդներ ■ Ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներ
 □ Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ □ Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ

Համակարգում ժամկետային ավանդների
փոփոխման դինամիկան




Համակարգում ցպահանջ ավանդների փոփոխման դինամիկան



Ընդհանուր կապիտալ

«Հ» բանկերի ընդհանուր կապիտալը հաշվետու եռամսյակի ընթացքում աճել է 2.5 %-ով կամ 8.7 մլրդ դրամով և եռամսյակի վերջին կազմել 361.2 մլրդ դրամ, որը հիմնականում ապահովվել է չբաշխված շահույթի ավելացման հաշվին, ընդ որում՝ ընդհանուր կապիտալը երկրորդ եռամսյակում ավելացել է 1.2 %-ով կամ 4.0 մլրդ դրամով: Տեղին է նշել, որ ընդհանուր կապիտալը նախորդ տարվա երրորդ եռամսյակում ավելացել էր 4.4 %-ով կամ 13.4 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի բաղկացուցիչներից չբաշխված շահույթի (եկամուտների պահուստը) ցուցանիշը հաշվետու եռամսյակում աճել է 18.5 %-ով կամ 21.0 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել մոտ 134.6 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 37.3 %-ը, ընդ որում՝ նախորդ տարվա երրորդ եռամսյակում վերոնշյալ ցուցանիշը աճել էր 13.5 %-ով կամ 13.1 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի մյուս կարևոր բաղկացուցիչ մասը՝ կանոնադրական կապիտալը, ընթացիկ տարվա երրորդ եռամսյակի ընթացքում մնացել է անփոփոխ՝ 226.4 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 62.7 %-ը: Հարկ է նշել, որ կանոնադրական կապիտալի աճը նախորդ տարվա երրորդ եռամսյակում կազմել էր 4.4 % կամ 8.6 մլրդ դրամ:

Համակարգում կապիտալի և կուտակված շահույթի փոփոխման դինամիկան



Եկամուտներ եվ ծախսեր

Ընթացիկ տարվա 3-րդ եռամսյակի ընթացքում բանկերի ընդհանուր եկամուտները կազմել են 68.5 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 55.3 մլրդ դրամ, ընդ որում՝ անցած տարվա 3-րդ եռամսյակի ընդհանուր եկամուտները կազմել էին 50.3 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 39.1 մլրդ դրամ: Հարկ է նշել, որ հաշվետու եռամսյակում երկրորդ եռամսյակի համեմատ համակարգում ապահովվել է 11.2 %-ի կամ 6.9 մլրդ դրամի չափով ավել եկամուտ և կատարվել 16.2 %-ի կամ 7.7 մլրդ դրամի չափով ավել ծախս:

Շահույթ


ՀՀ բանկային համակարգում հաշվետու եռամսյակի ընթացքում ապահովվել է 10.48 մլրդ դրամ մաքուր շահույթ, որը 2010 թ.-ի նույն ժամանակամիջոցում ապահոված մաքուր շահույթի ծավալին զերազանցում է 1.35 մլրդ դրամով: Ասվածին միայն ավելացնենք, որ այս տարվա երկրորդ եռամսյակում համակարգում ապահովվել էր 10.74 մլրդ դրամի մաքուր շահույթ:

Ամփոփ ցուցանիշներ

2011 թ.-ի երրորդ եռամսյակի արդյունքներով բանկերի ROE-ն՝ կապիտալի եկամտաբերության մակարդակը, սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել է 9.39 %, իսկ ROA-ն՝ ակտիվների շահութաբերության մակարդակը, նույն ժամկետի դրությամբ կազմել է 1.79 %: Պետք է արձանագրել, որ տեղի է ունեցել կապիտալի եկամտաբերության, ինչպես նաև ակտիվների շահութաբերության աճ անցած տարվա նույն ժամկետի համեմատ՝ ROE-ն աճել է 1.06 տոկոսային կետով, իսկ ROA-ն՝ 0.04 տոկոսային կետով:

ՀՀ բանկային համակարգի ամփոփ ցուցանիշները

Մլրդ դրամ



2011-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ հիմնական ցուցանիշներն՝ ըստ բանկերի,
դրանց աճը/նվազումն երրորդ եռամսյակի ընթացքում և բանկերի գրաված տեղը համակարգում

Աղյուսակ 1.
(մլն դրամ)

Յ/Յ	Բանկերի անվանումը	Ընդհանուր ակտիվները					Ընդհանուր պարտավորությունները					Ընդհանուր կապիտալը						
		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա կարգ	այդ թվում		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա կարգ	այդ թվում		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա կարգ	այդ թվում			
					Վարկ. ներդր- ումները	աճ/ նվազ (%)				Ֆիզ.անձ ժամկ. ավանդ	աճ/ նվազ (%)				Կանոն. կապի- տալը	աճ/ նվազ (%)	Կուտ. շահույթ/ վնաս	Զբաղ. շահույթ III-եռ.
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19
1	ԱԿԲԱ Բանկ	206573,3	7,2	1	137616,0	3,5	162809,0	8,1	1	34780,7	23,4	43764,4	3,9	1	30000,0	0,0	5037,7	1619,4
2	Էյչ-Էս-Բի-Սի Բանկ	173765,9	12,0	3	111769,9	6,7	144886,0	13,2	3	34790,0	-0,8	28879,9	6,3	5	10439,0	0,0	17621,7	1857,3
3	Արդշինհնվեստբանկ	133668,3	4,2	7	84777,6	0,5	103016,3	6,0	7	36123,5	13,2	30652,0	-1,5	3	15513,6	0,0	11316,7	-308,9
4	ՎՏԲ Հայաստան Բանկ	161799,3	6,5	4	122710,4	12,7	132033,9	7,1	4	34579,2	5,8	29765,3	3,9	4	13906,2	0,0	12135,8	1268,1
5	Կոնվերս Բանկ	139726,8	71,9	6	46553,8	-2,0	122430,4	89,7	6	18925,7	7,7	17296,4	3,4	8	4923,3	0,0	8309,4	598,1
6	Յունիբանկ	107454,6	-4,8	8	79469,4	6,3	90651,6	-6,1	8	48055,5	1,5	16803,0	3,1	9	11400,7	0,0	5722,2	705,3
7	Հայէկոնոմբանկ	54287,3	-9,2	14	33725,3	1,3	45145,9	-11,1	14	9758,0	6,2	9141,4	2,0	17	2333,3	0,0	1338,5	201,9
8	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	190732,4	7,5	2	142650,9	10,7	157235,4	8,4	2	33426,9	7,0	33497,1	3,6	2	25477,3	0,0	8124,6	1360,3
9	Ինտելոբանկ	70199,9	2,9	10	50626,6	9,7	56188,1	2,8	10	12664,2	6,8	14011,8	3,5	12	4431,2	0,0	6742,0	475,7
10	Հայբիզնեսբանկ	149435,6	4,0	5	99729,3	2,6	130227,1	4,2	5	36702,7	4,8	19208,4	2,7	6	13450,0	0,0	5420,0	606,4
11	Անելիք Բանկ	67781,6	6,5	11	40931,6	14,3	52019,8	9,0	13	15607,6	9,6	15761,7	-0,8	10	14300,0	0,0	1774,1	105,3
12	Առևտրային Բանկ	82304,6	2,2	9	65695,6	3,9	66845,2	2,2	9	12922,9	11,4	15459,4	2,4	11	12347,3	0,0	2857,4	366,5
13	Արցախբանկ	62037,2	0,0	13	44070,0	5,6	52414,8	-0,1	12	8637,1	4,9	9622,4	0,5	16	6561,2	0,0	2295,3	53,2
14	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	66971,3	-2,0	12	36643,2	6,1	55264,0	-3,4	11	11603,5	4,2	11707,3	5,2	13	7148,0	0,0	4115,5	612,0
15	ԱրմսկիսԲանկ	39459,7	2,8	16	20135,1	3,9	29639,0	4,5	16	2888,0	7,7	9820,7	-2,2	15	7002,0	0,0	1679,8	186,1
16	Զարգ. Հայկ. Բանկ	32908,8	5,3	19	21633,8	9,9	25392,1	6,8	18	11454,5	15,0	7516,7	0,7	19	4556,7	0,0	2565,8	103,7
17	Պրոմեթեյ Բանկ	36554,3	9,4	17	23107,7	8,8	18190,1	18,9	20	3112,3	32,4	18364,2	1,3	7	14400,0	0,0	3872,5	261,9
18	Բիբոս Բանկ	36052,4	3,2	18	27543,4	-1,6	27088,9	3,5	17	8252,4	24,6	8963,6	2,4	18	8382,2	0,0	576,2	224,3
19	ԲՏԱ Բանկ	8621,8	-4,8	21	4332,6	-0,2	3137,9	-12,9	21	1295,2	28,0	5483,9	0,6	20	6520,0	0,0	-1041,8	68,4
20	Պրոկոնեդիտ Բանկ	26647,5	-1,1	20	21544,6	3,2	21165,0	-0,8	19	4640,1	-26,2	5482,5	-1,9	21	6490,0	0,0	-1007,5	-103,6
21	Մելլաթ Բանկ	42341,2	-2,8	15	26042,7	-17,2	32379,9	-4,2	15	46,5	0,9	9961,3	2,2	14	6850,0	0,0	2992,2	214,4
	Ընդամենը	1889323,8	7,1		1241309,5	5,3	1528160,4	8,3		380266,5	7,3	361163,4	2,5		226432,0	0,0	102448,1	10475,8